ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ‘ԱՐՄԱՎԻՐ’ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

05.11.2015 17:16

Փաստաբանների պալատի փաստաբանները, այդ թվում՝ հանրային պաշտպանները այսօր՝ նոյեմբերի 5-ին այցելել են ՀՀ ԱՆ ՔԿՎ ‘Արմավիր’ քրեակատարողական հիմնարկ՝ խորհրդատվություն տրամադրելու ՔԿՀ-ում իրենց պատիժը կրող դատապարտյալներին:

Ծրագրում ներգրավված փաստաբաններն արդեն այցելել են Վանաձորի և Գորիսի ՔԿՀ-ներ:

Նշենք, որ այս փաստաբանական ծրագիրն իրականացվում է ՀՀ փաստաբանների պալատի և Եվրոպայի Անվտանգության ու Համագործակցության Կազմակերպության երևանյան գրասենյակի միջև կնքված համաձայնագրի հիման վրա:

Համաձայնագիրը ստորագրել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար Վիկտորյա Բուչոկը:

Ծրագիրը սկսել է նոյեմբեր ամսից, որի նպատակն է ՀՀ քրեակատարողական հիմնարկներում անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրել նախնական կալանքի տակ գտնվող անձանց և դատապարտյալներին: Իրավաբանական խորհրդատվությունները տեղի կունենան հենց ՔԿՀ-ներում: Ծրագրում ընդգրկված են Հայաստանի 9 քրեակատարողական հիմնարկներ: Ծրագիրն ըստ կնքված համաձայնագրի կավարտվի 2015թ. դեկտեմբեր ամսին:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF R

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })